

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՍՏԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԵՏԲ Է ՈՒՂՂԵԼ ԱՊ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ. 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սեղանակալութիւն ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գանձիւրի համար	Տարեկան,	50
»	»	Վեցամսեայ 30
Շրջակայից	»	Տարեկան, 60
»	»	Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՍԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՈՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՍԱՐ	
Տարեկան	Րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԻԿ Է

ԵՒ ԹՂԹԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Թերթին Վարչութեանը վրայ է:

Ձեռագիրներն հետ չեն դարձուիր:

Արտատու, ժ. ՄՐԻՆՆԻՍԷԼԻ

## ՎՏԱՆԳԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Իսկ, ինչպէս երէկ, նոյնպէս այսօր, կը դատարարուինք ու վաղն ալ պիտի դատարարուինք այն դատարարակութիւնը, որ թունաւորիչ է, մահացողիչ է, օտար է. խառնուածքով, կրօնքով, բարքով նկարագրով, կեանքով ու լիզուով անհունապէս տարբերող ազգի մը դատարարակութիւնն է, որ կը տրուի մեր որբերուն. այն որ ժամանակով տրուած էր մեր հիմնական աւագներուն . . . Եթէ եգիպտոսի Հայ բաշաները՝ զուտ ազգային դատարարակութիւն ստացած ըլլային, այսօր եգիպտոսի մէջ պիտի ունենայինք ազգային հաստատութիւններ, որոնք փառքը պիտի կազմէին տեղւոյս գաղթականութեան. Գահիրէ պիտի ունենար իր Ուսումնարանը, Ազգ. քանդակարար պիտի ունենար իր Արտեսանոցը. Գահիրէ՝ իր Որբանոցը, Ազգ. բանագրի իր Հիւանդանոցը. եգիպտոս պիտի ունենար իր Հայ Թատրոնը, Հայ Տպարանը եւ այլն. մինչդեռ հիմայ հոս ուրիշ բաներ կան. ուսումնարանի տեղ՝ Ազգ. վարժարանը (որուն համար կը մտախնայք բարենորոգում). արուեստանոցի տեղ՝ որճարան. արքանոցի տեղ՝ գինետուն. թատրոնի տեղ՝ սիրատուն:

Եթէ դատարարակել կը նշանակէ կազմել

սիրտը, նկարագրը, ընդունինք ուրեմն թէ՛ մեր որբերն ալ զիրենք պատասխարող բարերարներուն, իրենց դատարարակներուն մանրանկարը պիտի ըլլան — գիտնալ պէտք է թէ՛ օտար դատարարակ — ուսուցիչները՝ իրենց հողին ու տարրին մէջ են ու գիտեն թափանցել իրենց ետը:

Եթէ պապական է որբանոցը, վստահ ըլլաք որ քանի մը տարիէն՝ շերմեռանդ հետեւողներ պիտի ունենաք Լոյջոյայի, Ս. Գոմիակիոսի կամ Ս. Ֆրանչիսկոսի կէն. իսկ եթէ բողոքական է, Լուստի, Զոյլանի կամ Կալիստի հարապատ տրուողները պիտի կազմուին հիմնական այդ անմեղ որբակներու երամբներն, որոնք դեռ տատրակի միամտութիւնն ունին, և որոնց սիրտը, կոյս հող, տրամագիր է ընդունելու ցանուածը. . . .

Իրա՛ւ է. մենք չենք ուրանար, Եւրոպան ընդհանուր շարգերէն ի վեր միլիոններ թափեց Հայաստանի և Կիլիկիոյ ներքերը, որբերու և սովածներու նպատի համար, ինչ որ մարդասիրական պարզ ու բնածին զգացումէ ներշնչուած ժողովուրդի մը գործն է. ա՛ն՝ նետած է իր լուսն հանրային ոգորմութեան գանձանակին մէջ: Մոռացիտ չ'ըլլանք շուտով. սովտանջ Հայաստանին նպատող Եւրոպայի նախահայրերն էին, քանի մը տասնեակ հազարներով խաչակիր զինուորներ, որ տարիներով կերակրուեցան և խնամուեցան Կիլիկիոյ Հայ իշխանութեան ծախքով . . . :

Մարդասէր խօսող-գրողներու մագնիսական ու ձգողական ոյժերէն բռնագատեալ կառավարութիւններն օգնեցին, բարերարեցին մեզի, արեւելքի նահատակ քրիստոնեաներու. քաղաքավար բարեգործութիւն, որով տէրութիւնները կարծեցին պահ մը քնացնել հոգեւտանջ խղճի խայթը, որ կ'այրէ անոնց թաղապսակ գլուխները, շարդերու սև թուականէն ի վեր. շարդեր, որոնք աշխարհ գիտէ թէ՛ ի՛նչպէս կանխապատրաստուած էին թագուն, ամթայի շահագրտուներով . . . :

Գերմանիա, որուն երկաթէ նախարարատը չէր հաճեր աշխարհի Հայրը փոխելու Բոմբերանոցի մէկ զինուորի սկզբին հետ. Գերմանիա, որուն վեհապետը կը պագտուէր Հայուն Դահապետին հետ, հոն, Վոսիորի եղբրքը, ուր կուգային զարնուիլ Հայերու արիւնով ներկուած ալիքները, այն սահուն երբ կը լուէր կրէտէի քրիստոնեայ զահրուն վերջին աղաղակը. Գերմանիա, պարմանալի՜ հակասութիւն, առաջինն է այսօր Հայաստանի մէջ մեծաթիւ որբեր պահողներէն, դատարարակողներէն. հիմայ խղճի խա՞լթն ըսենք թէ՛ շահու տեն չը, որ այդ որբանոցները հաստատել տուաւ իրեն . . . : Պաղտատի երկաթուղին, Փոքր-Ասիան մտա ապագայի մէջ գերմանական գեղեցիկ դալթավայրի մը վերածելու կոչուած այդ երկաթի ցանցը, իր լայնութեան ու երկայնութեան մէջ, դեռ չա՛տ բարեգործութիւններ ընել պիտի տայ Տևտոնին:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«Մարդկային կենաց վարպետը»-ին բացողը Տիար Մ. Հայկունի, որ իր վէպ-առակներով ատեն մը զուարճացուց ընթերցասէր հասարակութիւնը, կուգայ, Հայ Սաղմոսերգու, «Նոր Որ»-ի մէջ երգելու Ազգին տառապանքն ու չարչարանքը որոնք կը պատկերացնեն ներքին Հայկունին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄՈՍ

ԳՒՈՒԹ Ա.

1. Ի՛նչպէս մեռած մոռցուեցայ յաշխարհի եւ կոյայ իրբու մի խեցի բեկեալ սափորի. վասնզի օտարական վիճակս խիստ երկար եղաւ եւ յիշատակս ջնջուեցաւ այն ամեն արտէ՛ յորում սէր չկար. եւ եթէ գոնուեցան զիս յիշատակողներ, նոքա մարդկութեան երկրային պատուհասը կրեցին:
2. Հաղիւ յիշուած եւ անա կրկին մոռացութեան վրտանցի մէջ եմ:
3. Թիչէ՛ ո՛վ Տէր, զի ամեն զրկեալներ քեզ կը զրկեն:

3. Այո՛՛ մեռածի նման մոռցուեցայ որպէս անօթ կորուած, զի նժգէ՛ ևւ պանդուխտ դարձայ նոյն իսկ իմ բնակավայրիս մէջ. նման այն գերեալներու, որք չունին յարգ, արժէք եւ պատիւ, վասնզի նոքա կորուած են ազատութեան զօրութիւնը:
4. Կենաց մատաղ լուրստանը կամ նորածագ արեւը, որ ամեն արարածի սիրոյ բոյր եւ յուսոյ նշույլ, զարգացման ածում ու ուսուցում կը պարզուէ, կ'ըսեն, ինձ համար անշնչելի սապ եւ հոգւոյ տառապանք եւեթ ծնուցին, ինչո՞ւ այդ հակը՛դդիմութիւն. վասնզի պարզ էր իմ սիրտ եւ ձգտումներս անմեղ էին եւ ոչ խորամանկ:
5. Մանկական վճիտ սիրտս, անխարդախ հաւատքս եւ ապագայի համար տածած առաքինական պատրաստականութիւնս, որք զբերս կը ներշնչէին ինձ, հակառակ զարգացում ունեցան հասակիս հետ: Նիւթականութիւնէ պաշարուած գտայ զաշխարհ, յորում սուտ էր ամեն ճշմարտանման բան: Ինչո՞ւ ո՛վ Տէր:
6. Իմ կեանքի հորիզոնն մէջ տարածուեցաւ թանձր ու թուխ ամպերու կուտակումն բարդ, բարդ, որպէս գետնաչէջ հրդեհի տապալակն եւ մոխրալից մշուշը որ կը բարձրանայ հրաճարակ աւերակի վերեւ: Բուէր միայն իրենց մահահոտ եւ քստմեցուցիչ վայրեններով այժմ ազատ են այդ հորիզոնի մէջ:
7. Բաղբը՝ որուն ճարտարապետն լինիլ պարտ էր

- ինձ եւ զոր յետ դառն փորձերու իմացայ, նա իմ գործանութեան մղիչ զօրութիւնն եղաւ. եւ իրբու՛ փոտուր նետեց զիս իւր անհամ քմահաճոյից հոսանքին առջիւ. լողացի բազմազան դժբաղդ արկածներու մէջ, զի անփորձ էի. բայց դեռ չունչ ունիմ, կեանք ունիմ եւ կամք:
  8. Յետ բազում փորձութեան, որուն լաւ է զըրկեալներու պաշարման շղթայ անուըր տալ. շղթայ՝ որու ազուցիկ օղակներն մարդկութեան տառապանաց անտանելի արկածներու հաւաքածոյքն են. յուսայիք կոյայ:
  9. Երբեմն անձանօթ մի զօրութեան օգնութեան կը դիմէի. խապտ հեռի չէի նկատեր զայն ինչ, բայց շատ անգամ ալ չէր մտենար նա ինձ. մշտապէս հանգիստ արդէն չէի խնդրեր: Աչքերս ի զօր յերկինս կը բարձրացնէի:
  10. Աշխարհը՝ զոր ճանաչեցի վերջապէս, չար էր եւ վատ. իւրաքանչիւր բարութիւն դիմակ էր, բերանով քարոզուածը սրտով կ'ատուէր. գաղափարն հեզնողը նոյն ինքն նորա հեղինակն էր. յետ քարոզի առաջին ծաղրն՝ քարոզչի գէժքին վրայ կը փայլէր. եւ ինչ որ իբր լաւ կը քարոզուէր բանիւ, գործով կը ջախջախուէր իբրեւ խոխ եղէգան:
- Իսկ աշխարհի առանցից երկու բեւեռները դեռ գուրս ժայթքած չէին բարութեան նման բան մը՝ որ ի կատար ածելի հաշուոց իբր միջոց գործածուէր Շա-

ԱՆՆՄԱՆ ԵՐԳԸ

որ ուրիշ նպատակ չունի, եթէ ո՛չ գերմանացու... համագերմանութեան մէջ հալել, ձուլել նոր Հայութիւն մը, որուն գաստիարակութիւնն ու կրթութիւնը նպաստաւորին իր հըսկայ ծրագիրներուն իրագործումը: Ահա՛ վերանգը, ահա՛ սաւերը, որ կը գործուի օտար գաստիարակութեան միջոցաւ, մինչդեռ միւս կողմէն ալ, կրօնափոխութիւնները կը յաճախեն ռուսաւթրքական սահմանագլխի Հայերուն մէջ ու Պատրիարքարանը, գժբաղդաբար, պահանջը ած հեղինակութիւնը չունի արգիլելու այդ ազգակուլ հոսանքը, քանի որ ռուսացումի քաղաքականութեան հանդէպ կը գտնուի:

Եւրոպան՝ գրեթէ, Թուրքիան՝ ներսէն, կեանքի պայմաններն՝ ամեն կողմէն, մեր բնաջնջումը կը պատրաստեն. ու մենք, ժողովուրդ, երբ կ'ըզանք վտանգը, իր ահեղ, վիթխարի, ցնցող ու սառեցնող ներկայութեամբ. երբ կը նշմարենք Ազգ. բարձրագոյն իշխանութեան ապիկարութիւնը հանդէպ այդ անդիմադրելի ուժին. կրնա՞նք անտարբեր դիտող մ'ըլլալ ու առաջնութիւն տալ միայն մեր եւր շոյող ու շահագրգռող ինքիւններու:

Զգուշանա՞նք բարեբարներէ, որոնք մեր արեւը կը քամեն ու մեր ոսկորներուն վրայ կը հիմնեն իրենց պայտանները. արհամարհե՞նք կուրդիլուսի արցունքները, զոր անյագ աչքեր կը թափեն մեր վրայ. օգուտ քաղենք պատուութենէն զոր կը վայելենք, հոս, հիւրասէր գաղթավայրերու մէջ. նախ համոզուինք վտանգին գոյութեանը, և յետոյ փութանք գտնել դարմանը: Մեր իսկ ձեռքով, զուտ ազգային դաստիարակութեամբ պատրաստենք մեր մասաղ սերունդը, հեղինակութիւն, թե ու թիկունք տա՞նք որբերու ինամատար ընկերութեանը:

Վտանգը՝ մեծ է, կորուստը՝ անխուսափելի. մեր ականջները դարձնենք դէպ ՚ի Մայր-Հայրենիքը, լացի ու կոծի, սովի ու զրկանքի զոհերուն աղաղակներէն պիտի խլանան սնունք:

Տիրա Յովհաննէս Սիթեան, Մննչունի հետազոտ ուղեորը, Խորհրդաւորին ու Տխուրին երազուն բանաստեղծը կը խզէ վերջապէս իր երկարատև լուսթիւնը, և կուգայ «Նոր Օր»ի մէջ թրթռացնել իր քնարին քնքուշ ձայնը, վեհախոս նեղոսի տղմուտ կեդրքը հնչեցնելով երգեր, որ անշուշտ եփբաթի ու Արաքսի յիշատակները նորոգելու սահմանուած են:

տերու աստուածն իրենց որովայններն էին երբեմն, իսկ հիմայ քաակներն են . . . :

11. Տենչանք, խարկանք և ոճիբք՝ սահմանաչեղ լրութեամբ տիրեցին ինձ. համբերեցի գառնապէս, առաւել քան գժբայ օրինակն. և այս ամենը տեղի կ'ունենային ի վճար այն գործիւրու, զորս ասարկնութիւն կը կոչէին զրբերս:

12. Անիծեցի վերացական, խաբուսիկ և անգոյ բարութեան և անարժէք լաւութեանց հեղինակութիւններն, այլ նախ քան զայս, անիծուած էր արդէն թունալից կեանքս, որ դեռ նոյնութեամբ կը տեւէ ու պիտի տեւէ անփոփոխ, քանի զոյութիւն ունենայ ներկայ ժամանակն իր կեղծ բառախաղերով և բարոյականութեամբ սքողեալ ոճրագործութեամբ, որու մասանց թուումն երկար է, շատ է, անթիւ և անվերջ:

13. Բա ու թեան անուամբ երեւակայեալ կամ հըսչակեալ բոյր ձեւակերպութիւնք սուտ են. զօրութիւնը միայն ճշմարտ է, ընդունելի և օգտակար: Զօրութիւնը միայն իրականութիւն, արդիւնք է. պատճառ է, իրաւունք է, կեանք է:

14. Կեղծաւորներ են, որք սրբութիւն, ճշմարտութիւն և առաքինութիւն կը քարոզեն. նորա յարեանց կրից ձարակ կը նիւթեն:

Անկեղծ են անէծք և հայրոյանք, որք զգայուն և

Երգ մը կ'ուզեմ երգերուն մէջ մէկ հասիկ, երգ մը տըրուր, արտասուածոր, մաղկատիկ. երգ մը այնչափ սրտածմբիկ որ վագրեր, Իբրեւ ի լուր նոր Որիէի, սիրտ յերեր, Կական բառնան և ողբաղին մըռնչէն. երգ մ'այնպիսի որպէս բընաւ հեծած չին Որբեկորոյ մայրեր կամ խեղճ այրիներ Որ այրիուն դիականց շուրջ են շարուեր. երգ մը որուն թառանջներուն հոգեհմայ նախանձեր իսկ յընատըրուրն երեմիւս. երգ մը վրեմ, անծայրածիր, որպիսի Լքսեց երբեմն հոգիս, անուրջ յարթմընի, երբ չար դեւը ըսկըսած չէր տակաւին Մեր չարչարանքն ու տանջանքներ անհնարին, Որ երգէին, պարտիկ մէջ անասման, երամովին երիտասարդ և կուսան Այնչափ անթիւր՝ որ քոզ ամբողջ մի ազգ էր Որ աղէտներն ապագային նըւագէր. երգ մը որուն ըզոր տուններ վերջանան Ու սկըրին սա բառերով. վա՛ն, Հայաստան. երգ մը այնչափ աղեկըտուր, սըրտայոյզ Որ, զըթալով մեզ, Աստուած, ծնողն ամենուս, Հաճէր ընդ այն և երգելով՝ որորէր Իր բազմատանջ որբոյն, հայուն, բիւր ցաւեր:

Թ. Ս. 14)6)1900 Գահիրէ

Թ. Ղ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն

Իսմաիլիա, 13 յունիս 1900

Պատ. Վարչութիւն «Նոր Օր» ազգագուտ լրագրի.

Կարգաւով օգտաշատ «Նոր Օր»ի Գահիրէ թուոյն մէջ «Որբերու հարցը» վերնագրով խմբագրականը, շատ յուզուեցայ:

Արդարեւ իրական կերպիւ պատկերացուցած էիք խեղճ որբերու արգահատելի վիճակը, և գործնական դարմանը մատնանիջ ըրած. այսինքն մեր ոյժերն ամփոփենք, քանի որ յուսահատին ոյժն ունինք, որ գերմարդկային կարողութիւն մ'է. այդ ամփոփեալ ոյժով շատ արդիւնք ձեռք կրնանք բերել. և պիտի համարձակիմ ըսել թէ՛ նոյն իսկ օտարին պաշտպանութեանը անգամ կարօտ չ'պիտի լինինք:

Իբրեւ օրինակ, նոյն թուոյն մէջ Գահիրէի Որբերու Հոգաւոր ընկերութեան Տնօրէն Խորհրդոյ տուած յայտարարութիւնը կը բաւէ:

Մարմին մը սակաւաթիւ անդամներէ բաղկացած, երբ կարող կ'ըլլայ 12 որբեր իր պաշտպանութեան ներքեւ առնել իր առաջին շրջանին իսկ արդ նրաջընդ, չ'պիտի կրնան գործել երբ, այն ամեն ընկերութիւններ, որոնք կազմուած են որբեր խնամելու, ձեռք ձեռքի տուած, դէպ ի մէկ նպատակ յառաջ կրթան, առանց եսական գձձութիւններու:

անկեղծ սրտէ կը բղխին. ուստի և միշտ կը դատապարտուին:

Գ. Ո. Ի. Թ. Բ.

1. Ու պահ մը կատարելապէս վատտակաբեկ, ոչ ժապատ, լքեալ ու սրտաբեկ, սահմանեցի ինձ համար օր մոխրոց. սկսայ ապաշխարել այն մեղքերը՝ զորս չէի գործած և բաւութեան ողջակէզ, զո՞ն ու պատարագ մատուցի:

2. Պատարագ մատուցի ՚ի ձայն ծնողայի և ՚ի հոտ անուշաբոյր խնկոյ, կնդրկի և արեան:

3. Արեան լեարդային բարդ ՚ի բարդ բարձրացած կոյտերու արտաշնչած միմոյրորաին համախառն խնկային բուրուճի միանալով ողջակիզաց ձեններման հոտոյն, շօշափելի ամպեղէն սեան նման յերկինս բարձրացան. անման և աներեւակայելի բողոք մը, խառն բողոքոյ յատուկ ամեն իրաւունքով, ու անյուրի չեղա՞ւ . . . : Ընդէ՞ր լռեցիլը, ո՞վ Տէ՞ր.

4. Բանութիւն, զրկանք, կեղեքմունք և մահունք որք պաշարեցին զիս, յապուշ կրթեցին մինչև զօրիս. ին իշխանութեան բեհեղղբուղային հեղինակութիւնը. և այս ամենուն հանդէպ ես համբերեցի. Ա. զի հեղէի և խոնարհ. Բ. զի անգոր էի և անմխարան: Իսկ Տէ՞ր, զու. ինչո՞ւ համբերեցիլ . . . :

5. Ընկերական աշխարհի մէջ՝ ուր արարչագործութեան կամքը նետած է և զիս, բայց եղուկ, շատ

Գահիրէ և Աղէքսանդրիա իրենց շրջականերով կարող են Յ կամ 4 քաղաքի որբանոցներու հոգն ըստանձնել. եթէ՛ այդ մասին ժողովուրդին պէտք եղած յորդորներն չ'ըլացուին լրագիրներով, լսարաններով, եկեղեցւոյ բեմէն քարոզներով, նոյնպէս մասնաւոր ջանքերով:

Մեր մէջ յեղափոխական գաղափարներն երբ մուտ գտած չ'էին, ո՞վ կարող էր հաւատալ թէ՛ քանի մ'անձնուէր հայրենասէրներու անհատական ջանքերով յեղափոխական ոգին պիտի ծաւալէր հայ սրտերու մէջ, և այդու կազմուէին յեղափոխական ընկերութիւններ, ստանալով անագին ծաւալ:

Հայաստանի ու Պոլսոյ 25—15 և ևսելի մօտ 10 տարիներ առաջուան ու հիմակուան վիճակներուն քաղաքատեթիւնն ապացոյց մ'է մեր ըսածներուն:

Հետեւաբար պիտի ինքզնի «Նոր Օր» ի պատուարժան Վարչութիւնէն որ ստանձնէր որբախնամ գործը տարածելու հոգը:

Թո՛ղ իր առաջին և նուիրական պարտականութիւնը նկատէ ՚ի սփիւռս աշխարհի ցրուած Հայոց մէջ արծարծել ու տարածել որբերու հոգատարութեան գաղափարը. գործ ոչ զժուարին՝ եթէ չ'պակիս կամքը:

Այն ատեն Գործ. ժողովը և Պատ. Վարչութիւնը արդարեւ ապացուցած պիտի լինին թէ՛ Ամենայն Հայոց Հայրապետ Վեհ. Հայրիկի օրհնարաշն Կոնդակի իմաստը գործագրութեան մէջ է, և այդու ամբողջ հայութեան համակրանաց արժանացած, որոյ Լսարան-Ընթերցատան ընկերութիւնն անխախտ հիմնուելու վրայ հաստատած, ինչ որ ամենուս ջերմագին փափագն է:

Մանաւանդ «Նոր Օր» ի ծրագիրն իսկ իր վրայ պարտը կը դնէ որբերու աւագ կարեւորութիւն ունեցող խնդիրն ընդգրկելու, զի արտասահմանեան թերթերու ամենամեծ մասը կուսակցական օրկաններ են, ոմանք պաշտօնական, ոմանք քաղաքիկալ. ՚ի բայ առեալ 2—3ր:

Որբերու հոգածութեան խնդիրը կը մնայ «Նոր Օր»ի և ուրիշ անկախ պարբերական հրատարակութեանց:

Մեր բացարձակ թշնամին թուրքն իսկ՝ արդեւ չը դնէր որբերու առթիւ հանդանակութեան և պէտք եղած խնամքին, ուրեմն ո՞րչափ մեծ ոճիր պիտի ըլլայ մեր ըրածը՝ երբ մեր անտարբերութեամբ խեղճ որբ գառնուկները սովալուկ գայլերու ձիրանները ձգենք:

ՄԵՆԱԿԵԱՅԸ

ՍՈՒԽԹԱՐ ԲԱԾԱ

(ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ)

«Journal du Caire» Գահիրէի լրագրին մէջ կը կարդանք. Պրիսիսի Սուրհանգակ ին թրիէտի թըզթակեցը տեսակցութիւն մ'ունեցած է Մուխթար բաշայի հետ:

Շարաթ 2 յունիս թրիէսի նաւակայքը հասաւ «Հապապուրի» Լոյտի շոգնաւոր. Աղէքսանդրիայէն եկող, ուր կը գտնուէր Ն. Վ. Ղալի Ահմէտ Մուխթար բաշա, նախկին յաղթող էրզրու. մի, այժմ Օսմ. ընդհանրիչ յեղիպտոս:

տկար կազմակերպութեամբ, փափաքեցայ ևս ևս ըստ իմ կարեաց օգտակար լինիլ հանրութեան յառաջդիմութեան, առաջին իսկ շարժման հանդէպ՝ երկաթեայ հարուածներու ցուրտ ճնշումն զգացի սրտիս վրայ և անարկու իմալուր ձայն մը շնչուցեց ականջիս թէ՛ զո՛ւ մարդ չ'ես և չ'ունիս ո՛րեւէ բաժին հանրային սեղանէն Օղբ և ջուրը, զորս չ'եմ կարող արգիլել քեզ, վայելէ՛ բայց աւելի, ոչինչ: Տէ՛ր, զու չ'ըսի՛ր, թէ զուք ամենեւին կը բարբ էք:

6. Օր քան զօր աւելցան անտանելի արեւուրբք ու ևս մահուան շուքին մէ՛ կեանքս կը պատասպարէի, ինչու որ սողալու գետին մ'իսկ չ'գտնել սկսայ անհուն տարածութեան մէջ: Կապտած էր ինչ արգէն անիրաւութեան ձեռքին՝ այլի, արտ, պարտէզ, տուն ու ընտանիք և ամեն ինչ՝ որ բնական բերմամբ և աշխատութեան յնորհիւ օրեկի սեփականս:

7. Ու այս բոլոր չարիքներէն յետոյ, զորս կրեցի և յորոց աւելին գերիվեր էր բարբարոսական և սատանայական իսկ երեւակայութենէ, անիրաւութեան անյագ լրբութիւնը պիղծ ձեռքը կարկանդ զէպի պատիւս, կեանքս, զորս իմ վերջին կայքս ու անբունաբարեկ ստացուածքս կը կարծէի ևս որոց ոչնչացումը նախատինք էր, ներքէ ինձ ո՞վ Տէ՛ր, մինչև իսկ Գու. էութեան նըզ զէ՛մ: Գամբանային սարսուռ մը պատեց զիս թափանցելով մինչև սրտիս կեղրոնը . . . :

Գ. Ո. Ի. Թ. Գ.

1. Եւ ահա ինչպէս չ'օր՝ որ զինին կը թափէ և որպէս յուսախար որ կը հիասթափի, արթնցայ: Արթնցայ հոգեով՝ արթնցայ մտքով և արթնցայ սրտով:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. Ստիվը հասաւ Վիեննա Նորին Բարձրութիւնը Հարստա պիտի երթայ շուտով, ու յառաջիկայ հինգշաբթի, 21ին Ֆրէսինկէն նա պիտի մտնէ Անգղիա երթալու: Նորին Բարձրութիւնը Լոնտոն պիտի մնայ հաւանականօրէն 10 օրուան չափ, թէեւ դեռ որոշուած չէ:

Ստիվը պիտի բնակի «Պրինկհամ Բայէյս» յի մէջ եւ թագուհին այցելութիւն պիտի տայ Ուիլսոնտրի մէջ: Ինչպէս որ նախապէս ծանուցինք, 21ին կամ 24ին պիտի հրաւիրուի Կալլէսի Իշխանէն, յետոյ Լորտ Սալզպէրիէն ու Ձճին ալ Լոնտոնի Լորտ քաղաքացիներն:

— 4. Պոլսէն կը գրեն յունիս 8 ին: Ռուսական Դեսպանատունը հրաման ստացաւ իր կառավարութիւնէն ազգու միջոցներ ձեռք առնել Հայաստանի կայսրութեան մասին Դեսպանատունը կը վախճայ թէ ծանրակշիւ բարդութիւններ առաջ չը գան Բ. Դրանց ցոյց տուած անհոգութիւնէն:

ՍՍԱԻԿԻ ԳԻՄԸ. — Սալիկի Թրամվէյներուն նոր գիծը բանիլ սկսաւ երէկ առաւօտ. գիծը հիմակուհիմայ երկու ցանցեր ունի. մին՝ Էլ-Տահէրէ Պապ էլ Սալիկ հրապարակը. միւսն ալ Աթապա էլ Սառայէն Սալիտէ Զէյնապ:

Սակապինը նոյնն է ինչպէս միւս գիծերունը:

Տեղոյս Բարեգործական ընկերութեան Պատ. Գիւլանի կողմէն վարչութեանս զրկուած է հետեւեալն ի հրատարակութիւն.

Բարեգործ. Ընկերութեան Սայր-Դիւանն եւ Գործադիր ժողովը, ըստ կանոնադրի, վերակազմուած ըլլալով այս անգամ, երկուսն անդամակալ նստին մէջ պաշտօնարարութիւնը կատարուեցաւ հետեւեալ կերպով:

Table with 2 columns: Position and Name. Includes titles like 'ՄԱՅՐ—ԴԻՒԱՆ' and 'ՄԵԺ. ՏԵՍԱՐՔ'.

ԱՊՍՏԱՄՈՒԹԻՒՆ Ի ԶԻՆ

Գերմանացի դիւանագէտ մը, որ տասը տարիներ անցուցած է Բէ.քիւնի մէջ, հետեւեալ տեղեկութիւնները հաղորդած է «Պրինկէնի Սուրհանդակ» լրագրին Պէրլինի թղթակցին:

«Երկնային Կայսրութեան ընկերները՝ միւս ժողովուրդներէն կը զանազանին այն բանով որ իրենք, հայրենասիրութիւն ըսելով կը հասկնան ատելութիւն՝ օտարներուն դէմ»:

Հայրենիքի գաղափարը զաղքած է գոյուած ինչու ունենալէ ճշմարիտ Զինացիին համար, այն թուականէն ի վեր որ Մանչեսթըրը, որոնց կը վերաբերի հիմնական արքայական հարստութիւնը, տիրացած են կառավարութեան: Չպիտի գրտնէք ո՛չ մի Զինացի, «dulce et decorum pro patria mori» ընդունող, պատերազմի պարագային Զինացիին իր անձնական փրկութիւնը կը փնտռէ փախուստին մէջ: Կը կարծէ թէ՛ կատարած կ'ըլլայ իր քաղաքային պարտականութիւնը, ատելով ու անխնայ ձեռնակ սասանաները, այսինքն անխնայ բարբարոսները:

Սայր-Կայսրուհին, կամ աւելի ճիշդը, Հօրաքոյր-Կայսրուհին, կը նպաստուորէ այդ ատելութիւնը եւ կը հակառակի ունեն միջոցներով այն բարենորոգումներուն, որոնք կրնան մերձեցնել Զինացիները եւրոպական քաղաքակրթութեան:

Կայսրուհիին ատելութիւնը՝ օտարներուն դէմ, յաճախ պիտական բանավարութեան սուհմանը կ'անցնի եւ իր օրինակը կը քաջալերէ խուժանը:

Պօքսըրներուն ազանգը՝ մին է բազմաթիւ գաղտնի ընկերութիւններէն, որոնց գործելու ծրագիրը կ'ամփոփուի օտարներուն արտաքուսմին կամ բնաշնչումին մէջ: Իրենց հակամտերն էսպէս պահպանողական են կամ հակագործա-

— Երկար ստին պիտի մնա՞ք Եւրոպա: — Սեպտեմբերի վերջերը Գահիրէ պիտի դառնամ, եւ այս վերադարձիս հաւաստիքը ապու համար, պիտի խնդրեմ իմ քարտուղարէս որ Ձեզի ցոյց տայ մեր երթուղարձի ստմանը, Ազիքսանդրիա տնտուած, մեր երկուքին եւ մեր երկու ծառաներուն համար Իրօք Օսման պէյ իր թղթագանակէն զուրս հանց եւ ինծի ցոյց տուաւ երկու սրահի տոմսեր Ազիքսանդրիա—Թրիքէսը եւ Թրիքէսը—Ազիքսանդրիա գծին, 6 ամսուան համար գործածելի:

ԿԱՅՈՒԹԻՒՆՆ ԵՅԳԻՊՏՈՍ

Առթէն ուղեցի օգուտ քաղել, հարցնելով Ընդհ. Գննիչին քանի մը մանրամասնութիւններ Եգիպտոսի ներքին կացութեան վրայ, զոր վերջերս բաւական վրդովեցուցիչ գոյներու տակ նկարեցին:

«Կարգապահութիւնը հաստատուած է» անգլո-եգիպտական ու քննիչ գնդերուն մէջ:

— Ի հարկէ. թէեւ, այդ պատմութիւնը շատ չափազանցուած է. լուրջ բան մը չ'կար:

— Իրաւ է որ նոր Սալիկա մը կամ Մահաթի մ'եւրեցած է եգիպտական Սուտանին մէջ:

— Բան մը չէ: Այն մարդը զոր մամուլը կը նկատէ իբրեւ նոր Մահաթի մը, պարզապէս Հանսայի աւազակապետ մ'է, որ Հարարի կամ Կալլաներու երկրին մէջ շահատակութիւններ կ'ընէ. բայց արդէն ջախջախուած է Հապէշիտանի գնդերէն ու յետոյ իտալականներէն:

— Բան մը գիտէ՞ք Սուլթանի քեռայր Մանուտ փաշայի վրայ, որ Եւրոպա փախած է եւ հիմայ Ժընէվ կը գտնուի, Լոնտոնայէ ու Փարիզէ անցնել վերջ:

— Բան մը չեմ գիտեր այդ պատմութիւնէն: Խիստ հետու եմ Կ. Պոլսէն: Գալով Մանուտ փաշայի, լաւ գիտէք որ դժգոհներ կան ամեն տեղ:

Ասոր վրայ փաշան կէս մը շտկուեցաւ իր երկայն աթոռին վրայ եւ ինծի ձեռքն երկնցուց, այսպէս հասկցնելով թէ՛ խօսակցութիւնը վերջ գտած էր:

Այս կարծ, բայց նշանակալից խօսակցութիւնը քիչ բան չը պարզեր այն գաղտնիքներէն, որով ծրարուած են Սուլթան փաշայի մեկնումն ու ճախարհութիւնը. կայսերական քննիչի մը ընդհին մէջ, «Կ. Պոլսէն խիստ հետու եմ», «Երթալու պէտք չունիմ», «Դժգոհներ կան ամեն տեղ» նախադասութիւնները ո՛չ նուազ խորհիլ կուտան ամեն անոնց, որոնք օտար չեն թրքական թելադրանքներուն. վերջապէս բան մը կայ Լազիլին լեզուին տակ, զոր թերեւս տարածում կը նկատէ զուրս հանիլը. սակայն, կրնանք սպասել մինչեւ Սեպտեմբերի վերջերը. սպասենք ու կը տեսնենք:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՐԱ 13 ՅՈՒՆԻՍ. — Լորտ Բօպթը կը հեռագրէ որ զօրավար Մէթուրն գարկած ու ցրուած է զօրավար Տը Ուէտի գնդերը Հրէնտոտըր Բիվէրի վրայ: Ֆրէնչ եւ Համիլտոն զօրավարներն երկուքսքսի յարձակեցան զօրավար Պօթայի վրայ, Բրէզորիայէ 15 մղոն հեռու ամրացած: Գիշերը կոխած էր, երբ իրենք գրաւեցին Պօթայի յառաջապահ կայքերը: Կոմս Գրըլի եւ 2 սպաներ սպանուեցան:

ԼՈՆՏՐԱ 14 ՅՈՒՆԻՍ. — «Տէլի Թէլեկրաֆ» կ'իմանայ Շանհայէ թէ՛ Զինացիները պատնէշներ կը կանգնեն Բէ.քիւնի պարիսպներէն զուրս, իրենց թնցանօթները շտկուած են բրիտանական եւ ամերիկեան պաշտօնատանց վրայ:

«Տէլի Մէլ» թղթակցիցը կը հեռագրէ Դիէն-Ձինէ թէ՛ 2000 Ռուսեր քամաք ելան ի Թաքու: Բրիտանական գնդերէն 600 մարդիկ մեկնեցան Հօնկ-Քօնկէ Ի Դիէն Ձին:

Անգլիական զրամատան Ձեղչի սակն է 30/0:

ԴԻԷՆ ՁԻՆ 14 ՅՈՒՆԻՍ. — Ձինական գնդերէն 10000 մարդ, Դուսի-Պա-Սիանի հրամանատարութեան ներքեւ կը պատրաստուին զիմադրելու, օտար զքնդերուն մայրաքաղաքը մտնելու պահուն: 1700 Ռուսեր ձիերով ու հեծելազնով ցամաք ելան Թաքու: Ծառն ալ կը զրկէ զօրարածին մը:

ԼՈՆՏՐԱ 15 ՅՈՒՆԻՍ. — Խորհրդարանը. — Պ. Պրօտրիք երկայն տեսութիւն մ'ըրաւ Զինու դէպքերուն վրայ: Պաշտօնապէս յայտարարեց թէ՛ կատարեալ համաձայնութիւն մը կայ տէրութեանց միջեւ. ու աւելցուց թէ՛ կառավարութիւնը ձեռք առած է զհետարական ոյժերը շատցնելու Եանկ-Ձէ-Բեանի մէջ:

ԼՈՆՏՐԱ 14 ՅՈՒՆԻՍ. — Տիկին Կլատտին մեռաւ:

ԴԻԷՆ ՁԻՆ 15 ՅՈՒՆԻՍ. — Ֆրանսական ծովային զօրքեր փորձեցին սուրիներու հարուածներով յարձակելու Անգլիայի Գննիչի մը վրայ որ գէմ կը կենար վայրաքարձի մը տիրանալու կամայական փորձին: Անգլիական զինեալ ոյժը պարտաստ էր միջամտելու, բայց կարելի եղաւ ծայրահեղութիւններու զիմունն արգելել, չնորհիւ բրիտանական նաւային ու հիւպատոսային իշխանութեանց, ամերիկեան հիւպատոսի աջակցութեամբը:

ԼՈՆՏՐԱ 14 ՅՈՒՆԻՍ. — Չօրավար Պօթայ գիշերով հարաւի ուղղութիւնը բռնեց:

Կը յիշէք որ ամբողջ աշխարհի լրագիրներուն մէջ հրատարակուած հեռագիր մ'այս օրերս կը ծանուցանէր թէ Սուլթան բաշան պաշտօնակէ կղած է, որովհետեւ Բ. Դրնէն 3 տարի է ի վեր անվճար թողուած իր ամուսկանները պահանջած էր, կ'ըսէր նաեւ թէ յանկարծ մեկնած էր Գահիրէէն, առանց յայտնելու թէ ո՛ւր պիտի երթար, այնչափ լարուած էին իր յարաբերութիւնները Լորտ Գրոմէրի հետ:

Որովհետեւ գիտէի թէ՛ Սուլթան բաշան Հապսպուրի մէջ էր, Ս. Բարթօլօմէօ Լազարէն գացի առողջապահութեան նաւովը եւ առողջապահական յանձնախումբին այցելութիւնն աւարտելուն՝ ելայ շոգենաւը. հազիւ թէ այցաքարտս զրկած էի Նորին վսեմութեան, սպասեակը վերադարձաւ խնդրելով որ ընկերանայի իրեն Օսմ. Գննիչը տարածուած էր երկայն աթոռի մը վրայ, նաւակալին խուցին առջեւ, որ իր տրամադրութեան տակ զրուած էր ազնուաբար. քովը նստած էր իր քարտուղարը, Օսման պէյ, երկուքն ալ ինձ բաւական տարեօք երեւցան, եւրոպական տարազով, տաճկական ֆէշ դրած: Բաշան տառապած դէմք մը, թաւ մօրուք մ'ունի, շատ խնամուած ու քառակուսի կտրուած:

Սուլթան բաշա սիրալիբ կերպով հրամայեց զիս նստելու, Ֆրանսերէն խօսելով ինծի հետ:

Դեռ ես այցելութեանս նպատակն իրեն չը բացած, խնդրեց ինձմէ Անգլո-Պօթեան պատերազմին վերջին լուրերը տայ:

Շուտ մը զինք գոհացուցի, յետոյ, իր մեկնումէն ի վեր տարածուած աղմուկները մէջ բերելով՝ իրմէ տեսակցութիւն մը խնդրեցի:

ԱճճԻՊԵ ԱՂՄՈՒԿՆԵՐ

Իրաւ է թէ՛ Ձեր վսեմութիւնը թողած է եգիպտոսը, Սուլթանին ու Ստիվին հետ ունեցած անհամաձայնութեան պատճառով եւ թէ՛ ինք մեկնած է «insalutato hospite» չդառնալու պայմանաւ:

Այս հարցումին, Բաշան ու իր քարտուղարը, ժողովեցան երկուքն ալ Սուլթանի, առանց պատասխանելու, մատուց ցոյց տուաւ ինձի Օսմ. զրօշակը, որ ի պատիւ իրեն կը ծածանէր շոգենաւին խելքին վրայ:

Եթէ մեկնած ըլլայի ա՛յսպէս, ինչպէս որ զուք կ'ըսէք, այս զրօշակը հող չը պիտի ըլլար ինձի համար: Երբէք անհամաձայնութիւն մը չ'է կղած Ստիվին եւ իմ, ո՛չ ալ Սուլթանին միջեւ:

— Իսկ Լորտ Գրոմէրի՞ հետ:

Մեր յարաբերութիւններն անոր հետ շատ մտերմական են, ճիշդ այնպէս ինչպէս որ կը վայելէ տարբեր պաշտօնատարներու, ինչպէս ենք մենք:

Ուրիմն այն լսուին ալ սխալ է թէ՛ Գուք եգիպտոսը թողեր էք, Թարապուսի պէյին պէս, որովհետեւ 3 տարի է ի վեր ա՛լ չէիք ստանար ձեր ամսականները:

— Մեկնումն բուն ստոյգ շարժառիթը, ինչպէս որ կը տեսնէք, ստամոքսի տկարութիւնն է: Ահա 7 տարի է որ Եւրոպա չեմ եկած. ուստի քանի մ'ամիս պէտք ունէի արձակուրդի, դարմանուելու համար: Երկուշաբթի առտուն, Կրաց պիտի երթամ, Տօքթ. Մուլլէրի խորհուրդ հարցնելու: Բժշկին ինձի տալիք պատուէրին համեմատ, անկից պիտի երթամ Մարիբոնպատ կամ Գիսինկէն:

— Ձեր վսեմութիւնը Կ. Պոլս պիտի երթա՞յ:

— Պէտք չունիմ հոն հրթալու:

2. Հաշուեցի յոյսերուս չափն ու համբերութեանս սահմանը, որք իրենց զագաթնակէտէն ալ վեր էին բարձրացած եւ այդ բարձրութիւնը իմ տկարութիւնն կ'ապացուցանէր: Ճշմարիտ, ճշմարիտ անտրամաբան չափազանցութեան զո՞ դարձեր էի:

3. Վշտագին աղաղակներ, հեծութեան ձայներ ու շարժումներ եւ տեսայ անմեղ գոհերու վկայացուցանի ու ներկայ նահատակներու զիականց կոչուերը, որոց թիւն ոչ՝ մի դարու պատմութիւն կրցած է գրել:

4. Վիրաւոր մանկուկ մա՛յր, մայրեր՝ Աստուած կը կանչէին. իսկ ես՝ իբրեւ լուսաւորեալ տասնեկններորդ դարու մարդ՝ Եւրոպա՞ գոչեցի . . .

5. Քաղաքական աշխարհի համար իմացայ թէ՛ դեռ մանուկ մ'էի, զի ինչ որ կը յուսայի, կը հաւատայի իմ արզար կարծած Եւրոպայէն, լիովին եւ խալառ բացակայ գաայ . . .

6. Վերջապէս յուսանաւ եւ վշտարեկ՝ անսանական եւ օրհասական վերջին ցնցմամբ փարեցայ նիւթին, նյութելով բոլոր բարի կոչուած ձեւակերպային առասպելները, որք բաւարաններու մէջ միայն գոյութիւն ունին, յուսացի կոպիտ ուժին, փարեցայ նմա՛ երկնից թողով առ ժամն իւր գերագոյն հեղինակութեան պահպանումն. վասնզի աշխարհի մէջ այլեւս չէր երեւար այդ փնտռուած երանելին, որ իւր հեղինակին հետ համարձակ կը թուէր:

7. Չկարացի յաղթել անմիջապէս, զի Դաւթի նման պարսաւտի երեք քարերն, հեռաւստութիւն միութիւն եւ պատաս ոյժ չունէի դեռ, որով Գողթաթն կարողանայի տապալել: Ա. քայլն՝ սկիզբ է, Բ.՝ վաւճաբիւն եւ Գ.՝ յաղորդութիւն: Դեռ յոյս եւ հաւատք պակասած չեն ինձմէ:

կան. կ'ուղեն պահպանել Ձինու աւանդութիւնս ներք, հակառակիլ օտարին միջամտութեանը՝

Իրենց մայր նպատակն է կատարի հակառակութիւն մը՝ Գուանկու կայսեր գէմ որ Գուանկուի վրայ բարեկարգչէն ներքնչուած, եւ ընդհանրապէս քաղաքակրթութեան գաղափարներուն հակառակ էր :

Պօքարները կը պաշտպանեն կառավարութիւնը ա՛յն ատեն միայն երբ այս վերջինը՝ նկատի առնէ իրենց ծրագիրը : Ընդհակառակն, ասպատակութիւն կը քարոզեն, այն վայրկեանին, որ վեհապետը զիջում մընէ օտարին :

Բէքինի կառավարութիւնը կը վախնայ անոնց ուժէն և ներքնապէս կը համակրի անոնց բաղձանքներուն :

Աղանդին կեդրոնավայրն է Շանկուոնկ գերմանական ազդեցութեան շրջանակին մէջ :

Արիւնահեղ խռովութիւններ պայթած են քանիցս այս նահանգին մէջ, ամենքն ալ Ձինուցի պաշտօնատարներէն նպաստաւորուած : Երկու անգամ, Գերմանիա պարտաւորուած է վերջնազորով պաշտօնակուումը պահանջելու Շանկուոնկի կառավարչին և երկու անգամն ալ, ասոնք ուրիշ քաղաք մը զրկուած են աստիճանի բարձրացումով :

Ձինաստանի անհրաժեշտ բաժանումը, նաև հանգիստներուն աղատ թողութիւնը, «ձերմակ սատանայ» ներուն գաղթուումը, երկաթուղիի շինութիւնները, ուսումնասիրութիւններու առաքելութիւնները, որոնք ծրագրիներ կը յօրինեն ու քիչ մ'ալ թրամվայի գիծեր կը շինեն ամեն ուղղութիւններու մէջ, ծագեցուցին հիմնական ասպտամբութիւնը, որուն, մի՛ տարակուսիք, դիւանագիտութիւնը պիտի գիտնայ հետեանքները քաղել :

Տարիներէ ի վեր Պօքարները կ'ասպատակեն Քէյճօյի նահանգը : Հո՛ն այրեցին ու թալանեցին քրիստոնէայ առաքելութիւնները : Արդէն շատ անգամներ բանտարկած են պաշտօնատարներ : Մէնչէնկի քաղաքապետը պատանդ բռնուեցաւ ու 4000 դաշիլ գումարով մը հազիւ գտաւ ազատութիւնը :

Այս մասնակի յաղթութիւնները քաջալերեցին ամբողջը, որ գնաց խառնուեցաւ ասպտամբներուն :

Վստահ եղիք որ օտարները չեն կրնար ո՛չ մի ազդու պաշտպանութիւն սպասել կառավարական գնդերէն :

Եթէ եւրոպական գնդեր անմիջապէս ցամաք չը հանուին ու չը զրկուին Բէքին ու Հանքօ, օտարներուն կեանքն ու եւրոպական բոլոր մեծ ձեռնարկները մեծ վտանգի մէջ են :

Բայց ամեն չարիքի մէջ բարիք մը կայ : Տէրութիւնները այս միջադէպը պատրուակ պիտի բռնեն, վճարական կերպով իրենց միջև բաժնելու համար չինական բրինձի կարկանդակը :

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԳՈՐԾ, ԺՈՂՈՎՈՅ

ՄԵԿ ՆԻՍՏԸ

ՋՍԻՆԵՏ ՄԵԿ ԱՐԱՐ

ԱՆՁԻՆՔ

- ՏԻՐԱՆ ՆԱՐԻԿԵԱՆ. — Ատենապետ,
- ՊԵՏՐՈՍ ԹԱԹՕՅԱՆ. — Ատենապետ,
- ՅՈՎԻԹ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ. — Գանձապետ,
- ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵՋԻՔՅԱՆ. — Խորհրդակցաներ,
- ՍԱՐԳԻՍ ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ. — Խորհրդակցաներ,
- ՍՐՐՈՒՀԻ. — Պէգիբեանի կինը,
- Սրապ մը :

(Տեսարանն է սենակ մը, ալ կողմը պատուհան, խորը դիւան, գէմ առ գէմ երկու դիւաններ, կեղծոր սեղան մը ծածկոցով, մի քանի աթոռներ, սեղանին վրայ վառուած լապտեր մը )

ՏԵՍԻՒ Ա.

ՍՐՐՈՒՀԻ. — Վարագոյր բացուած պահուց, սեղանին մօտ նստած կար կարելով կ'երգէ :

Ազատութեան որդի եմ,  
Արիւնահեղ Գալուստի եմ,  
Երբոր բանտէն ազատուիմ,  
Դարձեալ խումբ պիտի կազմուի :

Սենեկի դուռը կը զարնուի.

Ո՞վ է ա՛ն . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ, դրսէն. — Ես եմ, բա՛ց, հայրենասէր, տնաքանդ կնի՛կ . . .

ՍՐՐՈՒՀԻ, ելլելով եւ դեպ ի դուռը երբայով. — Ու՛րա՛ք . . . կնի՛կ գործ ունի՛ք . . . գուրսի դուռը բաց մնացեր է . . .

Կը բանայ դուռը.

ՏԵՍԻՒ Բ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ներս մտնելով. — Եթէ աշխարհի մէջ թափթփած, սէրտէմ, սայրըսը կնիկ մը կայ նէ, ա՛ն ալ դու՛ն ես : Գիշեր ատեն դուրսի դուռը բաց կը ձգես ու սենեկի դուռը կը գոցես, քա՛ . . .

Կը նստի եւ յօգիկները կը հանէ.

ՍՐՐՈՒՀԻ նստած կարը տարուակելով. — Մարիամ տուտուն հոս էր . . . գացած ատենը բաց ձգեր է . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ան ցնդածը դուռը դրսէ՛ն պիտի գոցէր . . . ետեւէն չե՛ն երթար, դուռը չե՛ն գոցեր . . .

ՍՐՐՈՒՀԻ. — Բան մըն է եղաւ . . . ա՛՞ք կ'ընես . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Արդէն ոչ քու բան մըն է եղաւ պիտի հատնի, ոչ ալ իմ ա՛՞ք ընելու . . . Եթէ գող մ'ըլլայի, ի՛նչ պիտի ընէիր հիմայ, քա՛ . . .

Դիւանին սակեմ հողաբախները կ'առնէ կը հազնի

ՍՐՐՈՒՀԻ. — Թխու՛ւ Գրիստո՛ս . . . գող ըլլայի՛ր . . . քա՛. վայ զլիուս . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Տեղեմ ելած եւ մօտեցած Սրբուհիին, մեկ կողմէն փողկապը փակելով եւ միւս կողմէն ոսփի կից մը օտար մտնու. բնածն աղէկ հասկցիր, չէ՛նք վայր իրօք զլիուս կը բերիմ . . .

ՍՐՐՈՒՀԻ, կանգնած, է՛, է՛, նորէն մի՛ պաշլայիր, գողը գար ի՛նչ պիտի տանէր. ի՛նչ ի՛նչ որ ունի՛ք նէ հոս է . . . պաշխա մութպահնուս մէջ քանի մը հաս ճաթտած թապախ . . . չանախ չէ՛մէկ կայ . . . մէկ մըն ալ սա տեղ կտորտած քարեղա մը . . . տանա՞ . . . գողը անոնց վրան պի՛ղ չ'նայիր . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Աս լեզուդ տեղէն կը հանեմ, լո՛ւէ՛ . . .

ՍՐՐՈՒՀԻ. — Անանկ է . . . չիտակը խօսիմ նէ, գէշ կ'ըլլամ . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Լո՛ւէ՛ կ'ըսեմ. վայրկեան մը լուր թիւն : Այդ տե՛ն Յովհաննէս որ փողկապը փակած ու օձիքը հանած էր, կ'սկսի չափեմ ալ հանել եւ ամենքը հաւաքած կը յարէ ցասկոս. Աս գիշեր ժողով ունի՛ք, ելի՛ր սա տեղ քիչ մը կարգի դի՛ր :

Կը մեկնի :

ՍՐՐՈՒՀԻ. — Ժողովին ալ չ'տանիք կ'ելլէ եւ արձուցնէր, նստարանները, բարձերը կը օտար, փոշեներն առնելով կը խօսի ինքնիքին. Ատուած ալ հոգիս չտանէր որ ազատուիմ . . . սա ի՛նչ է . . . շունը չ'քաշեր քաշածս. ոչ ուտելիքս ուտելիք է. ոչ խմելիքս խմելիք . . . Նայէ՛ սա աղտորուն . . . սա թափած մուշաններուն . . . աղէկ որ ես ըրած չեմ . . . ոսկորներս պիտի կտորտուէին ծեծի տակ . . . պարէմ բան մ'ալ ընե՛ն . . . շարժել մէկ երկու անգամ կը հաւաքուին, մինչեւ կէս գիշեր, ատեն ատեն ալ մինչեւ ատու կը խօսին, կը պօռան ու կը ձգեն կ'երթան տունս տեղս աղտորով լեյնելով : Է՛ն շատը սա իմ էլ զլուս էրկանս վրայ կը զարմանամ . . . իր վիճակը չ'նայիր ու ելած ընկերութեան մարդ եղած է . . . ժողովներն ալ իր տունը ընել կուտայ . . . մէկայնքը տուն տեղ չունի՛ն, ախմա՛խ, քեզի ի՛նչ . . . դուն քու հացիդ փարան հանելու ճամբան նայէ, ատանկ բաները փոր չեն կըշտացնէր . . .

ՏԵՍԻՒ Գ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ, գիշերազգեսքը հագած ներս կը մտնէ. տանա չ'ընցաւ . . .

ՍՐՐՈՒՀԻ. — Կը լինայ կոր . . . եկո՛ւր սա էօր-թիւններուն հալը տե՛ս . . . կը հաւնիս կոր սա ըրածիք . . .

Le gérant, J. MUNIER.

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Ի՛նչ կայ որ . . .

ՍՐՐՈՒՀԻ. — Ա՛լ ինչ ըլլայ . . . օխաներով սապօն կ'ուզէ որ մաքրուի . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Դուն սապօնը չէ՛ որ կը մտածես, դուն իւշէնի՛նչ կ'ըլլաս ատոնք լուանալու :

ՍՐՐՈՒՀԻ. — Տօղրուսու . . . ի՛նչ ալ աղւոր գըտար . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Սա մտքիդ մէջէն խօսեցայ ես՛ . . .

ՍՐՐՈՒՀԻ. — Ո՞ր մէկ խօսքդ զաթի մտքիս մէջէն չէ՛, Ձեմ ալ սատկիր որ ա՛ն ատեն խըմէթս գիտնաս . . .

ՅՈՎՀԱՆՆԷՍ. — Մի՛ վախնար, ես քեռէ՛ առաջ պիտի սատկիմ . . . վերէմ ըրի իս, վերէ՛մ, վերէ՛մ . . . ո՛ւր տեղէն ալ գէմս ելար, չ'գիտեմ : Դոսի դուռը կը զարնուի. Դունն է. անդամներէն մէկը ըլլալու է . . . գնա՛, բա՛ց. Սրբուհի մեկնելու վրայ, սա կարեւոր վերցո՛ւր, դուրս տա՛ր . . .

Սրբուհի կարեւր առնելով կը մեկնի :

ՅՈՎՀԱՆՆԷՍ առանձին. Լեզուն չ'ըլլայ նէ, խառնակները գլուխը պիտի կտցեն . . . բարձերը օտարով կէտէմ կարգի դրած է սենեակը . . . վա՛յ քեզի պէս կնկան . . . աշխարհ ալ գիտէ թէ կնիկ ունիմ . . . եթէ ես չ'ըլլամ, տունը աղբանոց մը պիտի դառնայ :

(Շարունակելի)

Պատ. Վարչութիւն «Նոր Օր»ի :

Աստ

Դիւանս պատիւ ունի ծանուցանելու Արդոյ անդամոց թէ՛ ընկերութեան ընդհ. ժողովոյ տարեկան գումարու մը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի 17 յունիս, կէս օրէ վերջ ժամը 3 ին, Գործ. Ժողովոյ Ատենապետ Մեծ. Տիար Ա. Պէրպէրեանի տան մէջ ՚ի Տանէր, հետեւեալ օրակարգով.

1. Հաշուեկշիռ ընթերցում եւ վաւերացում
2. Տեղեկագրի »
3. Մայր-Դիւանի եւ Գործ. Ժողովոյ պակասած անդամոց ընտրութիւնը :
4. Հիմնական Կանոնադրի վաւերացման առթիւ խորհրդակցութիւն :

Այս առթիւ Դիւանս կը փութայ հրաւիրել ընկերութեան բոլոր Պատ. անդամները, ներկայ գտնուիլ որոշեալ ժամուն յիշեալ տան մէջ, ուր յատկապէս զիրենք առաջնորդելու համար Տիար Ս. Երամեան պիտի սպասէ «Փարմասի Զահէր»ի առջեւ :

Ի դիմաց Մայր-Դիւանի Ընդհ. Ժողովոյ Որոշման ընկերութեան Հայոց Ատենապետ Ս. ԲԻՒՐԱՏ

Գահիրէ, 16 յունիս 1900

ՆՈՒՐԱՏՈՒՔ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՆ

ԳԱՀԻՐԷ, Արժ. Տ. Եղնիկ Պալուշի — Դահ. ողջ 10 «Գեղարուեստ»ի գրքուկին համար :

ԳԱՀԻՐԷ, Տիար Ս. Հայկունի. — 5 օրինակ «Մարդկային կենաց վարագոյր»էն որ իր երկասիրութիւնն է :

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿ

Տեղւոյս «Որբերու Հոգատար» ընկերութեան Տնօրէն խորհրդին «Նոր Օր»ի թիւ 3ով հրատարակուած տեղեկագրին մէջ հետեւեալ տպագրական վրիպակները սպրդած են : Նուիրատուներէն Տիար Յակոբ Պաղճեանի 30 դրշի նուէրը նշանակուած է 20. որբերէն Մարտի-Յ. Մաղիկեանը պէտք է ըլլայ Ղազիկեան եւ Սուրէն Մ. Հազարեանը՝ Նարայեան :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 14 ՅՈՒՆԻՍ 1900

7128	6174	4832	3860	2175	2264
5384	3550	7330	4448	4040	4637
9430	7135	9497	4071	1769	2139
3757	4628	8154	445	2564	4814
		7112	353	9190	

Տպագրութիւն Ա. ԴԱՐՐԻՆԵԱՆ — Պագար Մուրուր